ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«  » հոկտեմբերի 2010թ.** **N-Ա**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթները և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետը.

**Երևան քաղաքի ավագանին** ***որոշում է.***

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող վարչական շենքի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.03.2010թ. թիվ 2756249 վկայական) երրորդ անձանց օգտագործման իրավունքներով չծանրաբեռնված տարածքներն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ վերջինիս հետ կնքելով վարչական շենքի անհատույց օգտագործման պայմանագիր: Ընկերության բյուջեի եկամտային մասն ապահովելու նպատակով պայմանագրում նախատեսել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության իրավունքն՝ իրեն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված վարչական շենքի տարածքներն՝ Երևանի քաղաքապետի համաձայնությամբ, այլ անձանց վարձակալության հանձնելու մասին:

2. Սահմանել, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության և երրորդ անձանց միջև Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող վարչական շենքի տարածքների վերաբերյալ կնքված վարձակալության պայմանագրերի լուծման դեպքում ազատված տարածքները համարվում են փոխանցված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 28-ի «Շենքեր հանձնելու մասին» հ.578 որոշմամբ Մարշալ Բաղրամյան 78 հասցեի «Մետրո» ՓԲԸ-ի վարչական շենքը հանձնվել է Երևանի քաղաքապետարանի տնօրինությանը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով ընդունված ՀՀ կառավարության 29.05.2009թ. հ. 604-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Երևանի ավագանու առաջին ընտրությունից հետո սեփականության իրավունքով անհատույց Երևան քաղաքին համարել փոխանցված (հանձնված)՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում այդ պահին հաշվառված (հիմնարկին ամրացված) գույքը՝ ներառյալ Երևանի ավագանու և քաղաքապետի նստավայրը՝ Երևանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող շենքը, այդ թվում՝ անշարժ գույքի համար առանձնացված հողամասերը:

Երևանի Մարշալ Բաղրամյան պող. 78 հասցեի վարչական շենքի նկատմամբ 05.03.2010թ. գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը: Պարզվել է, որ նշված շենքի որոշ տարածքների վերաբերյալ ընկերության կողմից կնքվել են վարձակալության պայմանագրեր, որոնցից ծագող օգտագործման իրավունքները ստացել են պետական գրանցում:

ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի «Երևանի քաղաքապետին լիազորություններ վերապահելու մասին» հ.383-Ն որոշմամբ Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության («Մետրո» ՓԲԸ-ի իրավահաջորդ) բաժնետոմսերի կառավարման լիազորությունները՝ Երևանի քաղաքապետին:

ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 28-ի «Շենքեր հանձնելու մասին» հ.578 որոշման 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ վարչական շենքն պետք է անհատույց օգտագործման իրավունքով հանձնվեր «Մետրո» ՓԲԸ-ին և վերջինիս հետ կնքվեր անհատույց օգտագործման պայմանագիր: Մինչ այժմ վարչական շենքը հանձնված չէ ընկերությանը և նշված պայմանագիրը կնքված չէ, ինչի մասին հայտնել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն: Վերջինս խնդրել է իրեն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել վարչական շենքը և թույլատրել կնքել վարձակալության պայմանագրեր՝ ընկերության բյուջեի եկամտային մասն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության 05.06.2008թ. նիստի արձանագրության 16-րդ կետով հավանություն է տրվել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության 2008-2012 թթ. ընթացիկ գործունեության բարելավման միջոցառումների ծրագրին և 2008-2012 թթ. Ֆինանսական հոսքերի կանխատեսումների հաշվարկներին, որոնց հիմքում դրված են նաև եկամտային մասում վարձակալությունից ստացվող եկամուտները, որոնք գնահատվել են ելնելով վարձակալության համար նախատեսված առավելագույնը 1300 քմ մակերեսի աստիճանաբար զբաղվածության հասնելու ենթադրությունից և գովազդից ստացվող եկամուտները:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող վարչական շենքն անհատույց օգտագործման հանձնելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ